ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/79

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 06.08.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/79 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 06.08.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը ս.թ. ապրիլի 26-ին՝ հրավերով նախատեսված ժամկետում և կարգով, էլեկտրոնային ձևով www.armeps.am համակարգի միջոցով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հանձնաժողովին է ներկայացրել իր հայտը Հրավերի 9-րդ չափաբաժնով, որով նախատեսվում էր ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար ձեռք բերել տեսապրոյեկտորներ (լրակազմ):

Ս.թ. օգոստոսի 3-ին՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի և Հրավերի I-ին մասի 7.8 կետի պահանջներով, էլեկտրոնային փոստով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն դիմել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, խնդրելով տրամադրել 9-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթերի՝ Հրավերի N 6 և N 6.1 հավելվածների սկանավորված պատճենները:

Նույն օրը ժամը 14:50-ին ARMEPS համակարգից Ընկերությունը ստացել է ավտոմատ ծանուցում, որին կցված էին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու՝ առ 02.08.2018թ. № 1.3 որոշմամբ հաստատված, հայտարարությունը և նրա Հավելված 1-ը, որտեղից Ընկերությունը տեղեկացել է, որ 9-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն, որի հետ էլ Պատվիրատուն պատրաստվում է պայմանագիր կնքել անգործության ժամկետն ավարտվելուց հետո:

Ընդունելով նշված հայտարությունը և սահմանելով անգործության ժամկետ՝ «սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հետո մինչև 5-րդ օրացուցային օրն ընկած ժամանակահատվածը» գնահատող հանձնաժողովը ուղղակի և կոպտորեն խախտել է 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 10-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է»:

Նույն օրը, որպեսզի անց՝ ժամը 15:07-ին՝ Ընթացակարգի քարտուղար Տ. Աբրահամյանի t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեից Ընկերությունը ստացել է նաև Ընթացակարգի նշված չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշների համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը՝ Հրավերի N 6 և N 6.1 հավելվածների սկանավորված պատճենները, որոնք վերջինիս կողմից ընթացակարգի գնահատող հանձնաժողովին են ներկայացվել ս.թ. հուլիսի 10-ին:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի «զ» ենթակետի, այն է՝ մասնակիցը հայտով ներկայացնում է «... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)»:

Ընկերությունը նշել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի Հրավերի I-ին մասի 7.13 կետի 4-րդ ենթակետը ուղղակիորեն պահանջում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցից «..երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը...»:

Մինչդեռ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված N 6.1 հավելվածը պարզապես ներկայացնում է իրենից Հրավերի պայմանագրի Հավելված №1-ի՝ «Տեխնիկական բնութագիր» 9-րդ չափաբաժնի տառ առ տառ արտատպված (copy-paste) պատճենը, չավելացնելով կամ չպակասացնելով գեթ մեկ ստորակետ:

Տրամադրված նյութերը հստակ, պարզ և անվիճելի վկայում են, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հրավերի N 6.1 հավելվածում իսպառ բացակայում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, այն է՝ առաջարկվող ապրանքի՝

- ապրանքային նշանը,
- արտադրողի անվանումը,
- ծագման երկիրը,
- ապրանքի մակնիշները (բացակայում է մատակարարման ենթակա լրակազմի բաղադրիչ մասեր կազմող ապրանքի (սարքերի)՝ տեսապրոյեկտորի, կախոցի, պրոյեկցիոն էկրանի և մալուխների նույնիսկ մեկ անվանում):

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի, այն է՝ «որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը»:

Հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնի 3.1 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցից նույնպես պահանջում է ներկայացնել՝ «...հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները...»:

Մինչդեռ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված N 6 հավելվածում ի սպառ բացակայում է նույնիսկ մեկ կոնկրետ խոսք առդիր ներկայացվող փաստաթղթերի մասին և մնում է միայն փաստել, որ նման փաստաթղթեր ընդհանրապես գոյություն չունեն և հենց իսկ այդ պատճառով գնահատող հանձնաժողովը նման պայմանագրի պատճենը «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին չի տրամադրել:

Ելնելով վերը նշված փաստերից՝ Ընկերությունը գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգը 9-րդ չափաբաժնի մասով անցկացնելիս գնահատող հանձնաժողովը կոպտորեն խախտել է՝

ա) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք)՝

- 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, այն է՝ «Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. 1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում...».

- 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, այն է՝ «... Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ 1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը. 2) մասնագիտական փորձառություն...».

- 10-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «..Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է»:

բ) ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի «զ» ենթակետը, այն է՝ «... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)...».

- 61-րդ կետի 2-րդ ենթակետը, այն է՝ «...որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը»:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է անվավեր ճանաչել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2018թ. թիվ 1.3 որոշման հավելված 1-ով կայացրած

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից հայտարարելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.08.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 13.08.2018թ. թիվ ԴՎԱ/3048 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 14-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն որակավորման փուլում ներկայացրել է հրավերով սահմանված չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր, այդ թվում նաև՝ նմանատիպ պայմանագիր:

Հետագայում Ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովի որոշմամբ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել նաև Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով և սահմանված կարգով վերջինիցս պահանջվել է ներկայացնել նաև տվյալ չափաբաժնի համար պահանջվող որակավորումը հավաստող փաստաթղթերը և քանի որ թիվ 9 և թիվ 14 չափաբաժիններում ներառված ապրանքատեսակների համար հրավերով պահանջվել է նույնատիպ պայմանագիր, հաշվի առնելով 14-րդ չափաբաժնի մասով նմանատիպ պայմանագիր ներկայացնելու փաստը, կազմակերպությունից պահանջվել է ներկայացնել միայն հավելված 6-ը և հավելված 6.1-ը:

Ներկայացված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, ինչից ելնելով «Տիգման

Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող կազմակերպություն և հաստատվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը:

Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակումից հետո սահմանված ժամկետի մասով՝ Պատվիրատուն հայտնել է, որ պահպանվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ գնման այլ ընթացակարգերի համար (բացառությամբ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի) անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.08.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր առարկել են բողոքի դեմ, հայտնելով, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ պահանջվել է միայն «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը՝ Հավելված 6-ը և 6.1-ը: Ընկերության կողմից չի պահանջվել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման պայմանագրերը, ուստի և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին դրանք չեն տրամադրվել: Միևնույն ժամանակ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագիրը բավարարում է հրավերի պահանջներին և հանդիսանում է համանման: Ինչ վերաբերում է «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ապրանքի ապրանքային նշանը, ծագման երկիրը չնշելուն, ապա հրավերով նման պահանջ նախատեսված չի եղել, այլ եղել է հստակ աղյուսակ, որին համապատասխան մասնակիցը ներկայացրել է առաջարկվող ապրանքի նկարագիրը: Դրա հետ մեկտեղ Պատվիրատուի ներկայացուցիչը նշել է, որ պայմանագրի անգործության ժամկետի սահմանման հետ կապված բողոքաբերի պնդումներն անհիմն են, քանի որ անգործության ժամկետը սահմանվել է օրենքին համապատասխան հինգ օրացուցային օր:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/79 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/79 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար նյութական միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

9. <u>Տեսապրոյեկտոր (լրակազմ)</u>

Ապրանքի նկարագրությունը-Product Highlights նվազագույնը 4000 Lumens Բնական /Native/ XGA (1024 x 768) թույլտվություն /Resolution/ Լամպի տեսակը UHP x 1 Լամպի կյանքը ստանդարտ ռեժիմում 3000 ժամ, Էկո ռեժիմում 4000, հատուկ էկո ռեժիմում 5000 ժամ Լամպի հզորությունը 260 W Պրոեկցիոն հեռավորությունը 1 - 9.8 մ օպտիկական խոշորացում 1.2x թվային խոշորացում 2x Կոնտրաստի հարաբերակցությունը 17000: 1 Համատեղվող հեռարձակման համակարգերը PAL, SECAM, NTSC ինտերֆեյսներ VGA, HDMI կոմպոզիտային վիդեո, աուդիո մուտք (ելք) ներկառուցված բարձախոսներ 1 x 10 W աղմուկի մակարդակը 34 dB Լրացուցիչ Պրոյեկտորի պահպանիչ պայուսակ Հոսանքի միացման լար, հեռակառավարման վահանակ, անհրաժեշտ միջոցներ՝ HDMI ստանդարտի մալուխ ոչ պակաս 10 մետր, VGA ստանդարտի մալուխ, ոչ պակաս 20մ. երկարությամբ: Պատի պրոյեկցիոն էկրան. Էկրան՝ ոչ պակաս 240սմx240սմ, պատին ամրացնելու հնարավորությամբ, պաստառը՝ անկար, ապածավալման հնարավորությամբ: Պրոյեկտորի կախիչ՝ առաստաղին ամրացնելու հնարավորությամբ, ոչ պակաս 65սմ, շարժական-կարգավորվող: Շահագործման հրահանգ՝ ռուսերեն կամ հայերեն լեզուներով: Խոտանները վերացվում են տեղակայման վայրում՝ մատակարարի միջոցներով: Հավաքածուի նմուշի աշխատանքի փորձարկումը նախապես իրականացվում է պատասխանատու ստորաբաժանման հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը: Արտադրող գործարանի սերտիֆիկատի և գործարանային գրքույկի առկայությամբ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն:

4. «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի հայտի N 6.1 հավելվածով Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Տեսապրոյեկտոր (լրակազմ)	Ապրանքի նկարագրությունը-Product Highlights նվազագույնը 4000 Lumens Բնական /Native/ XGA (1024 x 768) թույլտվություն /Resolution/ Լամպի տեսակը UHP x 1 Լամպի կյանքը ստանդարտ ռեժիմում 3000 ժամ, Էկո ռեժիմում 4000, հատուկ էկո ռեժիմում 5000 ժամ Լամպի հզորությունը 260 W Պրոեկցիոն հեռավորությունը 1 - 9.8 մ օպտիկական խոշորացում 1.2x թվային խոշորացում 2x Կոնտրաստի հարաբերակցությունը 17000: 1 Համատեղվող հեռարձակման համակարգերը PAL, SECAM, NTSC ինտերֆեյսներ VGA, HDMI կոմպոզիտային վիդեո, աուդիո մուտք (ելք) ներկառուցված բարձախոսներ 1 x 10 W աղմուկի մակարդակը 34 dB Լրացուցիչ Պրոյեկտորի պահպանիչ պայուսակ Հոսանքի միացման լար, հեռակառավարման վահանակ, անհրաժեշտ միջոցներ՝ HDMI ստանդարտի մալուխ ոչ պակաս 10 մետր, VGA ստանդարտի մալուխ, ոչ պակաս 20մ. երկարությամբ: Պատի պրոյեկցիոն էկրան. Էկրան՝ ոչ պակաս 240սմx240սմ, պատին ամրացնելու հնարավորությամբ, պաստառը՝ անկար, ապածավալման հնարավորությամբ: Պրոյեկտորի կախիչ՝ առաստաղին ամրացնելու հնարավորությամբ, ոչ պակաս 65սմ, շարժական-կարգավորվող: Շահագործման հրահանգ՝ ռուսերեն կամ հայերեն լեզուներով: Խոտանները վերացվում են տեղակայման վայրում՝ մատակարարի միջոցներով: Հավաքածուի նմուշի աշխատանքի փորձարկումը նախապես իրականացվում է պատասխանատու ստորաբաժանման հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը: Արտադրող գործարանի սերտիֆիկատի և գործարանային գրքույկի առկայությամբ:

5. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 03.08.2018թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի մեջ նշվել է,

որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հետո մինչև 5-րդ օրացուցային օրն ընկած ժամանակահատվածը:

6. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 03.08.2018թ. էլեկտրոնային եղանակով դիմել է գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ խնդրելով Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի և Հրավերի 1-ին մասի 7.8-րդ կետի համաձայն, տրամադրել Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթերի՝ հրավերի թիվ 6 և թիվ 6.1 հավելվածների ամբողջական սկանավորված պատճենները:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 06.08.2018թ. բողոքը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-3-րդ կետերի համաձայն՝

1. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված հայտարարությունն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին՝ ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, ***որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):***

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար նյութական միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

9. <u>Տեսապրոյեկտոր (լրակազմ)</u>

Ապրանքի նկարագրությունը-Product Highlights նվազագույնը 4000 Lumens Բնական /Native/ XGA (1024 x 768) թույլտվություն /Resolution/ Լամպի տեսակը UHP x 1 Լամպի կյանքը ստանդարտ ռեժիմում 3000 ժամ, էկո ռեժիմում 4000, հատուկ էկո ռեժիմում 5000 ժամ Լամպի հզորությունը 260 W Պրոեկցիոն հեռավորությունը 1 - 9.8 մ օպտիկական խոշորացում 1.2x թվային խոշորացում 2x Կոնտրաստի հարաբերակցությունը 17000: 1 Համատեղվող հեռարձակման համակարգերը PAL, SECAM, NTSC ինտերֆեյսներ VGA, HDMI կոմպոզիտային վիդեո, աուդիո մուտք (ելք) ներկառուցված բարձախոսներ 1 x 10 W աղմուկի մակարդակը 34 dB Լրացուցիչ Պրոյեկտորի պահպանիչ պայուսակ Հոսանքի միացման լար, հեռակառավարման վահանակ, անհրաժեշտ միջոցներ՝ HDMI ստանդարտի մալուխ ոչ պակաս 10 մետր, VGA ստանդարտի մալուխ, ոչ պակաս 20մ. երկարությամբ: Պատի պրոյեկցիոն էկրան.

Էկրան՝ ոչ պակաս 240սմx240սմ, պատին ամրացնելու հնարավորությամբ, պաստառը՝ անկար, ապածավալման հնարավորությամբ: Պրոյեկտորի կախիչ՝ առաստաղին ամրացնելու հնարավորությամբ, ոչ պակաս 65սմ, շարժական-կարգավորվող:

Շահագործման հրահանգ՝ ռուսերեն կամ հայերեն լեզուներով: Խոտանները վերացվում են տեղակայման վայրում՝ մատակարարի միջոցներով:

Հավաքածուի նմուշի աշխատանքի փորձարկումը նախապես իրականացվում է պատասխանատու ստորաբաժանման հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը:

Արտադրող գործարանի սերտիֆիկատի և գործարանային գրքույկի առկայությամբ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ***համաձայն հավելված N 6.1-ի.***

2) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Ընթացակարգի 6.1-րդ հավելվածով նախատեսվել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից ***առաջարկվող ապրանքի՝ անվանումը և տեխնիկական բնութագրերը.***

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	անվանումը	տեխնիկական բնութագրերը

Նույն հավելվածով նշվել է, որ եթե հրավերով չի նախատեսվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա սույն նախադասությունից հանվում են «ապրանքային նշանը, արտադրողի անվանումը,» բառերը, իսկ աղյուսակից՝ «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» սյունակները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն:

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարության համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի հայտի N 6.1 հավելվածով Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի համար ներկայացրել է

հետևյալ տեխնիկական բնութագիրը, որը նույնական է հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին.

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Տեսապրոյեկտոր (լրակազմ)	Ապրանքի նկարագրությունը-Product Highlights նվազագույնը 4000 Lumens Բնական /Native/ XGA (1024 x 768) թույլտվություն /Resolution/ Լամպի տեսակը UHP x 1 Լամպի կյանքը ստանդարտ ռեժիմում 3000 ժամ, Էկո ռեժիմում 4000, հատուկ էկո ռեժիմում 5000 ժամ Լամպի հզորությունը 260 W Պրոեկցիոն հեռավորությունը 1 - 9.8 մ օպտիկական խոշորացում 1.2x թվային խոշորացում 2x Կոնտրաստի հարաբերակցությունը 17000: 1 Համատեղվող հեռարձակման համակարգերը PAL, SECAM, NTSC ինտերֆեյսներ VGA, HDMI կոմպոզիտային վիդեո, աուդիո մուտք (ելք) ներկառուցված բարձախոսներ 1 x 10 W աղմուկի մակարդակը 34 dB Լրացուցիչ Պրոյեկտորի պահպանիչ պայուսակ Հոսանքի միացման լար, հեռակառավարման վահանակ, անհրաժեշտ միջոցներ՝ HDMI ստանդարտի մալուխ ոչ պակաս 10 մետր, VGA ստանդարտի մալուխ, ոչ պակաս 20մ. երկարությամբ: Պատի պրոյեկցիոն էկրան. Էկրան՝ ոչ պակաս 240սմx240սմ, պատին ամրացնելու հնարավորությամբ, պաստառը՝ անկար, ապածավալման հնարավորությամբ: Պրոյեկտորի կախիչ՝ առաստաղին ամրացնելու հնարավորությամբ, ոչ պակաս 65սմ, շարժական-կարգավորվող: Շահագործման հրահանգ՝ ռուսերեն կամ հայերեն լեզուներով: Խոտանները վերացվում են տեղակայման վայրում՝ մատակարարի միջոցներով: Հավաքածուի նմուշի աշխատանքի փորձարկումը նախապես իրականացվում է պատասխանատու ստորաբաժանման հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը: Արտադրող գործարանի սերտիֆիկատի և գործարանային գրքույկի առկայությամբ:

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված

հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, ***որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):***

Ընթացակարգի 6.1-րդ հավելվածով նախատեսվել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ըստ չափաբաժինների ***ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը և տեխնիկական բնութագրերը:***

Այսպիսով՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվում է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը: Միևնույն ժամանակ Ընթացակարգի հրավերով չի նախատեսվել, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պետք է ներկայացվի նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): ***Մինչդեռ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը սահմանում է, որ նշված փվյալները ներկայացվում են, եթե նման պահանջ նախատեսված է հրավերով:***

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է 9-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, որը պարունակում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 6.1 հավելվածով սահմանված՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացման ենթակա տեխնիկական բնութագրում ներառված անհրաժեշտ տեղեկությունները: Ուստի գտնում եմ, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Գտնում եմ, որ բողոքն սույն մասով անհիմն է և ենթակա է մերժման:

Անդրադառնալով բողոքի երկրորդ հիմքին՝ հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող պայմանագիր, ուստի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից այն չի տրամադրվել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ գնահատող հանձնաժողովի քարտուղարին ուղղված 03.08.2018թ. էլեկտրոնային նամակով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն խնդրել է տրամադրել Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ***ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթերի՝ հրավերի թիվ 6 և թիվ 6.1 հավելվածների ամբողջական սկանավորված պատճենները:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին տրամադրվել է հրավերի թիվ 6 հավելվածը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը և թիվ 6.1 հավելվածը՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Դրա հետ մեկտեղ Պատվիրատուի կողմից ԳԲԽ-ԱՄ-2018/79 բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստի ժամանակ, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ներկայացվել են «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից որպես նմանատիպ (համանման) ներկայացված պայմանագիրը, հանձնման-ընդունման ակտերը և հաշիվ-ապրանքագրերը: Հետևաբար արձանագրում եմ, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի պնդումն այն մասին, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն չի ներկայացրել նմանատիպ (համանման) պայմանագիր, անհիմն է:

Ինչ վերաբերում է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից վկայակոչված այն հիմքին, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, ապա հայտում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու ***հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:*** Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն ***առնվազն հինգ օրացուցային օր է:***

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 03.08.2018թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի մեջ նշվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հետո մինչև 5-րդ օրացուցային օրն ընկած ժամանակահատվածը:

Միևնույն ժամանակ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելու ամսաթիվը պարունակող www.gnumner.am կայքի համապատասխան էջի մեջ նշված է ***«Հրապարակված է 2018-08-03 15:05:33-ից մինչև 2018-08-08 23:59:00 ժամը ներառյալ»:***

Այսիսով՝ Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Չնայած այն հանգամանքին, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության մեջ նշվել է, որ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հետո մինչև 5-րդ օրացուցային օրն ընկած ժամանակահատվածը, այնուամենայնիվ, գտնում եմ, որ սույն հարցն ուղղակիորեն կապված չէ բողոքաբերի կողմից ներկայացված բողոքի առարկայի և պահանջի հետ, ուստի սույն հարցը չի կարող դիտարկվել որպես էական սույն բողոքի շրջանակներում:

Դրա հետ մեկտեղ խախտման փաստը հնարավոր չէ արձանագրել նաև այն առումով, որ սույն բողոքը ներկայացվել է 06.08.2018թ. իսկ անգործության ժամկետը համաձայն Օրենքի պետք է լրանար 08.08.2018թ. ներառյալ, ուստի հնարավոր չէ սույն բողոքի շրջանակներում հաստատված համարել Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու անգործության ժամկետի խախտման փաստը, քանի որ այն դեռևս չէր լրացել և պարզ չէ թե արդյոք Պատվիրատուն նման խախտում թույլ կտար թե ոչ, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ www.gnumner.am կայքում հայտարարությունը հրապարակելու ամսաթիվը պարունակող էջի մեջ նշված է ***«Հրապարակված է 2018-08-03 15:05:33-ից մինչև 2018-08-08 23:59:00 ժամը ներառյալ»***::

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 06.08.2018թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 06.08.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**